ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 9/10

ք. Երևան 26 մայիսի 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովում Արթուր Իսրայելյանի փոխարեն նշանակել ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտոր Միքայել Հովհաննիսյանին:
2. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի կազմից իր դիմումի համաձայն հանել Յուրի Ավետիսյանին և նույն հանձնաժողովում նշանակել ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Ժակ Մանուկյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ